

ԳՐԱԿԱՆ

ԱՍՏՂԻԿ ԱՐԵՒՇԱՏԵԱՆ

Բանասիրական Գիտությունների Մագիստրոս

ՎԱՐՈՒԺԱՆ ՈՍԿԱՆԵԱՆԻ «ՇՇՈՒԿՆԵՐԻ ՄԱՏԵԱՆ» ՎԷՊԸ ԲԱԽՏԻՆԵԱՆ ՔՐՈՆՈՏՈՊԻ ՀԱՅԵԱՅՔՈՎ

Բանալի բառեր. քրոնոտոպ, վէպ, ինքնակենսագրական, արկածային, ժամանակ, անցեալ, ցեղասպանություն, յուշ, իտէալ, նեմեսիս

Key words: chronotype, the poem, autobiographical, adventurous, tense, past, genocide, memory, ideal, Nemesis

«Քրոնոտոպ» տերմինը հումանիտար գիտությունների տեսական դաշտ է ներմուծել Միխայիլ Բախտինը: Բախտինը «Քրոնոտոպ» ասելով հասկանում է ժամանակի և տարածության փոխ-կապակցությունը: «Ժամանակի և տարածության յարաբերությունների միջև եղած կապը, որը գեղարուեստորէն արտացոլուել է գրականության մէջ, կ'անուանենք «քրոնոտոպ» (որը բառացի թարգմանում է «ժամանակա-տարածություն»)»¹ (թարգմանությունը մերն է): Բախտինը համոզուած է, որ քրոնոտոպի ամենակարեւոր բաղադրիչը ժամանակն է, որը գրականության զարգացման հետ զուգահեռ պայմանաւորել է գրական երկի ձեւը, ժանրը, տեսակը, ինչպէս նաեւ բաժանուել է միաժամանակեայ և տարաժամանակեայ երեւոյթների՝ առանց որոնց վէպը՝ որպէս էդպիսին՝ գոյութիւն չէր ունենայ. «Սա տրամաբանական է. պատահական համընկնումը, այսինքն՝ պատահական միաժամանակեայ երեւոյթները, և պատահական բացերը, այսինքն՝ պատահական, տարաժամանակեայ երեւոյթները: ...Ինչ-որ բան եթէ կատարուէր մէկ րոպէ առաջ կամ մէկ րոպէ յետոյ, այսինքն՝ եթէ չլինէին պատահական միաժամանակեայ և տարաժամանակեայ այս երեւոյթները, ապա սիւժէ նոյնպէս ընդհանրապէս չէր լինի, և վէպ գրելը կը լինէր անիմաստ...» (թարգմանությունը մերն է)²:

Եթէ հետեւենք Բախտինի օրինակին և տեսութեանը, ապա պիտի ասենք, որ վէպի գերագոյն մասնիկը ժամանակի քրոնոտոպն է: Քրոնոտոպեան այս մոթիւնները փորձել ենք գտնել, վերլուծել Վարուժան Ոսկանեանի «Շշուկների մատեան» վէպում: Սակայն բացի ժամանակի և տարածության քրոնոտոպից փորձել ենք նաեւ դիտարկել այլ երեւոյթներ, որոնք ժամանակակից վէպում նոյնպէս կարեւոր տեղ են զբաղեցնում և որոնցով են պայմանաւորուած տարածա-ժամանակային քրոնոտոպերը, այսինքն թէ՛ սրանք ժամանակի հետ կանգնած են գրեթէ համահարթութեան վրայ:

«Շշուկների մատեան» վէպը ռումիներէնով գրուած ինքնակենսագրական վէպ

¹ Бахтин М., «Вопросы литературы и эстетики», Москва, 1975, стр. 234.

² Նոյն տեղում, էջ 242:

է, որը հայերէն թարգմանուել և հրատարակուել է 2012 թուականին: Վէպը բազմաթիւ այլ լեզուներով հրատարակուել և գրողի համար մեծ հռչակ է ապահովել, ստացել է նաեւ մրցանակներ: Զարմանալի է, որ այն լայն տարածում և բարձր գնահատական ունի Եւրոպայում, քանի որ հայի մասին է՝ մի ընտանիքի օրինակով: Հեղինակն իր անունից պատմում է մի մեծ հայ գերդաստանի պատմութիւն՝ որպէս ականատես այն տարիների, որոնց ժամանակ դեռ ծնունդ էր եղել (հայերի շրջանակում չափազանց մեծ տեղ ու դեր ունի յուշը, որն այնքան է պատմում սերունդներին, թուում է՝ նրանք էլ են ապրել այդ տառապանքի տարիները):

Բախտինը քրոնոտոպը դիտարկում է ըստ վէպերի ժամանակագրութեան, ըստ տեսակի ու ժանրի. ինքնակենսագրական վէպի քրոնոտոպը ամենացայտունն է այստեղ, բայց համոզուած ենք, սա վէպի այն միակ տեսակն է, որում կարող են խառնուել բոլոր փուլերի վիպական յատկանիշներն ու ամբողջութիւն կազմել, առաւել եւս երբ այն ներկայացնում է շուրջ երկու դարի պատմութիւն: Այսպէս՝ որպէս երկուդարեայ վաւերագրութիւնն արտացոլող վէպ, բնականաբար, այն պիտի ունենար ժամանակի ընգծուած քրոնոտոպ: Ժամանակը վէպում չափազանց ցայտուն է, նոյնիսկ կոնկրետ. ի վերջոյ ընթերցողը հասկանում է՝ ինչ տարիների մասին է խօսքը, հեղինակն էլ չի խուսափում իր մեծ հայրերի մասին ստոյգ կենսագրական տեղեկութիւններով խօսել (թուեր, վայրեր, անուններ...): Այստեղ ամէն բան կոնկրետ է, իսկ ժամանակն ու տարիները ձգուած են 19-րդ դարից մինչեւ մեր օրերը՝ 21-րդ դար: Դէպքերի շղթան էլ կարծես կառուցուած է նոյն կոնկրետութեամբ. վէպն սկսվում է մահից. «...Ուրեմն ենիչերիների պարագլուխը նրան բերել տուեց իր առջեւ ու հրամայեց ծնկի գալ: Սուրը հանեց ու Յարութիւնին՝ մեծ եղբօրը, սպանեց...»³, և աւարտում մահով. «Այնտեղ, Միսակ Թորլաքեանի ծննդից ճիշդ հարիւր տարի յետոյ, թուրքական մի ընտանիքում մի տղայ էր լույս աշխարհ գալու, որը դեռեւս պատանի և ատելութեամբ սնուած, 2007-ի յունուար 19-ին հայ լրագրող Հրանտ Դինքին էր սպանելու»¹: Այսպէս ամբողջ վէպն է լցուած զոհերով ու զոհի հոգեբանութեամբ, բայց սա ֆանտաստիկ ժանրից չէ. սա միանգամայն ճշմարիտ փաստագրութիւն է: Սակայն այս ամէնով հանդերձ հեղինակը առիթը բաց չի թողնում իր ընթերցողին անպայման տեղեկացնելու. «...Շշուկների մատեանը ոչ թէ պատմութեան դասագիրք է, այլ՝ խղճի վիճակների գիրք: Ուստի այն դառնում է ճառագող, էջերն էլ՝ թափանցիկ: Ծիշդ է, որ «Շշուկների մատեան»-ում բազում ճշգրիտ թուականներ կան, որոնք նոյնիսկ օրը, ժամը և տեղն են նշում: Գրիշը շատ արագ է շարժւում, բայց երբեմն որոշում է կանգ առնել՝ ինձ և ընթերցողին սպասելով, իսկ այդ ժամանակ գուցէ մանրամասնում է աւելի, քան անհրաժեշտ է»⁴: Վէպի հերոսները ոչ թէ յօրինուած կերպարներ են՝ հեղինակի սուբյեկտիւ երեւակայութեան արդիւնք, այլ իրական հերոսներ՝ դարի հերոսները: Վիպաշարը չի սահմանափակում պատերազմական կամ ցեղասպանութեան իրադրութեան նկարագրութեամբ, այն տարածւում, հասնում է նեղ անձնական կեանք՝ սկսած տոհմի հայրերի՝ Կարապետ Ոսկանեանի և Սեդրակ Մելիքեանի կեանքից, կենցաղից, պատմութիւնից... Վէպի սկիզբը յուշում է՝ ստեղագործութեան մէջ խառնուած են բախտինեան երկու քրոնոտոպերն էլ՝ ճանապարհինը, նոյն ինքը՝ տարածութիւնը, և ժամանակինը: Սակայն սրանք միախառնուած չեն՝ որպէս տարածա-ժամանակային ընդհանրութիւններ, այլ առանձին-առանձին գործում են դիպաշարի վրայ, փոխում դէպքերի ընթացքն ու ազդում հերոսների կեանքի, ապրելակերպի վրայ, իսկ միաձուլում են միայն հազուադէպ. «Ի հեճուկս պանդխտութեան, արիւնոտ յուշերի և անցնող ժամանակի՝ այդ պահին աշխարհը կարծես անփոփոխ ու հանգիստ լինէր,

³ Ոսկանեան Վ., Շշուկների մատեան, Երևան, 2012, էջ 20 (Այսուհետ բոլոր մէջբերումները՝ նոյն գրքից):

⁴ Նոյն տեղում, էջ 285:

իսկ հոգիները՝ հաշտուած»⁵, կամ. «Մանկութեանս ժամանակուայ ծերունիներն իրար էին պատմում այդ պատահարները: Հանդիպումները, որոնց կանայք ու երեխաները չէին մասնակցում, տեղի էին ունենում կէսօրից յետոյ՝ սուրճ խմելիս: Հաւանաբար նոյն բանն էր ամենուրէք՝ Բուխարեստում, Կոնստանցայում, Պլոեշտում, Պիտեշտում կամ Կրայովայում Բուզըրուի վաճառական Նշան Ղազարեանի բակում կամ Մուղովայի պատշգամբով տներում»⁶: Եւ բոլոր դէպքերում գուցէ մի փաստ է միայն միացնում այս երկուսին, երբ... «Իմ մեծ հայրերը իրենց դարից հասկացան միայն, թէ որքան դժուար է նոյն հողի մէջ մահանալը, որտեղ ծնունդ ես...»⁷: Հեղինակը թելադրում է հոգեբանութիւնը, տարբեր են ճանապարհները, նոյնն է ժամանակը, սակայն այս երկուսը միանում են դարի ճիւղի՝ «Ծնունդ հողում մահանալ» շթողնողի արնագոյն թանաքով: Վէպը՝ որպէս ինքնակենսագրական բնոյթի վէպ, գրուած է յուշի տեսքով (չնայած, որ հեղինակը հերոսներից շատերին նոյնիսկ չի էլ տեսել), հէնց այս է գուցէ պատճառը, որ ժամանակն անորոշ է, վայրիվերումներով, անընդհատ ընթերցողը ստիպուած է լինում թռչել ներկայից անցեալ, որը չի թողնում ապրել, անցեալից ապագայ, որն արդէն ներկայ է դարձել, անընդհատ մշուշոտ է պատկերը պատմութեան ու վայրկեանի, չկայ ժամանակի զգացողութիւն, բայց կայ ժամանակ. սա մէկ ուրիշ դէպքում կը դիտարկուէր որպէս թերութիւն, բայց այս վէպում առաւելութիւն է դառնում նրանով, որ իւրաքանչիւր հերոսի հոգեբանութիւնն է լի մակընթացութիւններով և տեղատուութիւններով, ընթերցողը ստիպուած է լինում իւրաքանչիւր հերոսի հետ անընդհատ ապրել ու մեռնել, ապրել ու մեռնել ու մեռնել ի վերջոյ՝ պատմութեան հետ, փակել էջ, բայց կրկին բացել նոյն էջը, որովհետեւ հոգու բուռն ընթացքը չունի ժամանակի գիտակցութիւն... Ժամանակագրութեան խառն բնոյթը չի խանգարում ընթերցողին նաեւ այն պատճառով, որ գրողն է խօսում, գրուցում է իր գրքի էջերը թերթողի հետ, չի դիմում դու-ով, չի դիմում կոչականներով, բայց ակամայից գրուցում է, կիսում յոյզը. ահա, օրինակ. «1949-ն է: Միեւնոյն ժամանակ 1957-ի նոյեմբերն է, երբ Սիրեստ գետի հովտի դաշտերի վրայ հողմախառը, վաղաժամ ձմեռ էր սկսուել: Նաեւ 1964-ն է, այս անգամ «Շշուկների մատեան»-ի միւս գործող անձանց հետ եմ՝ մատներով մածուցիկ կոլիվա վերցնելիս: Եւ 2005-ի նոյեմբերն է. երբ ժամանակը կարծես փոխուել է, միայն այն պատճառով, որ հալածուելու և շշուկով խօսելու բեռը վերածուել է ազատ լինելու և ասելիքը չիմանալու բեռի, հէնց նախ և առաջ, որովհետեւ չգիտես ինչ ասել»⁸: Մինչդէռ տասնեակ էջեր առաջ հեղինակը 1964 թուականի դէպքերի ականատեսն էր, էջեր անց՝ 2005-ի, այնուհետեւ՝ 1949, անգամ 1894-95 թուականներ, երբ թուում է՝ վերջապէս պիտի միայն ու միայն 21-րդ դարը տնօրինող լինի... ու յետոյ էլի ժամանակային շրջապտոյտ, բայց յաճախ է նաեւ նման միաձուլ, զուգահեռ ընթացքը: Յետոյ էլի կրկնում է ժամանակային միաձուլումը՝ այս անգամ արդէն «1965-1895-1920-1915» հերթականութեամբ:

Թուում է՝ խիստ պատմագրութիւնն է ստիպում այսպիսի թռիչքներով առաջ ընթանալ, բայց գրքի լեզուն գեղարուեստական բնոյթի է:

...Իսկ ճանապարհի սիմուլը, որը ստեղծում է բախտինեան տարածա-ժամանակային քրոնոտոպը վէպում, ինչու ոչ, դառնում է նաեւ առանձին քրոնոտոպ, եթէ բաժանենք տարածութիւնը ժամանակից... Ճանապարհը ժամանակի հետ համընթաց է գնում, պարզապէս յաճախ չի կրկնում, այն մնում է իր անշարժութեան մէջ, այն ճկուն չէ ժամանակի պէս, գուցէ հեղինակը մերժուած ու տառապեալ ժողովրդի հո-

⁵ Նոյն տեղում, էջ 17:

⁶ Նոյն տեղում, էջ 211:

⁷ Նոյն տեղում, էջ 25:

⁸ Նոյն տեղում, էջ 235-236:

գեբանութեամբ յատուկ վախ ունի ընթացող ճանապարհի նկատմամբ, բայց գուցէ պարզապէս բաց է մնացել այս կէտը, որովհետեւ ժամանակը չափազանց ճկուն է ընթացել վէպում... Եթէ հաշուի առնենք, որ վէպն ինքնակենսագրական է, պիտի համաձայնենք, թէ հեղինակը գրել է առանց երկար-բարակ մտածելու, դրա համար էլ միգուցէ ճանապարհը չի փոփոխուում, թէպէտ կարելոր է և առաջնային... Այդ դէպքում ինչպէ՞ս է ժամանակը, անկախ յուշագրի պատումային ընթացքից, «Առաջ ու հետ, ձախ ու աջ անում»:

Ճանապարհը, ինչպէս ասացինք, նոյնն է, նոյն Դեյր-էզ-Ջորը, պարզապէս այլ անուններով՝ Ֆրանսիա, Դոնի Ռոստով, Թիֆլիս, Բուխարեստ, Հալէպ, Ստալինգրադ, Պլոեշտ, վերջապէս Ռումինիայ, որտեղի հայ է հէնց հեղինակը: Ամբողջ խնդիրը ճակատագրերի նոյնութիւնն է, բոլորի հայեացքում նոյն ապրուած ճանապարհն է պատկերուած, որը բացատրուում է այսպէս. «Այս պատմութիւնը, որն անուանում ենք «Շշուկների մատեան», իմ պատմութիւնը չէ: Այն սկսուել է մանկութեանս օրերից շատ առաջ, երբ շշուկով էին խօսում: Սկսուել է նոյնիսկ մատեան դառնալուց շատ առաջ: Եւ մանկութեանս Ֆոկշանում չէ, որ սկսուել է, այլ Սվազում, Դիարբեքիրում, Բիթլիսում, Ադանայում ու Կիլիկիայի շրջանում, Վանում, Տրապիզոնում, Արեւելեան Անատոլիայի այն բոլոր վիլայեթներում, որտեղ ծնուեցին մանկութեանս տարիների հայերը և ովքեր համարուում են այս գրքի հերոսները»⁹:

Վէպում կարեւորագոյն դերակատարութիւն ունեն անունները, որոնք ստեղծագործութեանը նաեւ որոշակի արկածային երանգ են հաղորդում: Հեղինակը կարողանում է իր պատմութիւնների մէջ բացի սուգի ու տառապանքի զգացումներից հաղորդել նաեւ կատակային իրադրութիւնները, արկածները, որոնց դրդողը վրէժ-խնդրութիւնն է: Այսպէս՝ խառն անունները, որոնք համապատասխանում են խառըն տարեթուերին ու ճանապարհներին, բացատրում են հետեւեալ կերպ. «... Ամբողջ տեսլը հայերէն տառերով էր գրուած՝ բացի թուականներից, որոնք արաբական էին: Կազմին հաստ գրչածայրով ու գլխատառերով մի բառ էր գրուած. «Նեմեսիս»...»¹⁰: Եւ անհասկանալիութեան համատեքստում հերոսը՝ որպէս ականատես, այստեղ է խառնում ժամանակը, տարածութիւնը, անունները. «Տեսլը բովանդակում էր գրչածայրով գրուած մի քանի էջ՝ մէկը միւսի տակ երկու սիւնների վրայ շարուած անուններ, իսկ նրանց միջեւ, անունները երկուական միացնելով, գրուած էին տարիները: ...Առաջին սեան անուններն արտառոց հնչողութիւն ունէին, որ բոլորը «Փաշայ» անուանումով էին վերջանում: Յետոյ տարիները նշող թուերի վրայ սլաքները ձգւում էին դէպի այլ անուններ, այս անգամ՝ հայկական. Թալեաթ Փաշայ - 15 մարտ, 1921, Բեռլին - Սողոմոն Թեհլերեան:

Սաիդ Հալիմ Փաշայ - 6 դեկտեմբեր, 1921, Հոռոմ - Արշաւիր Շիրակեան:

Ճեմալ Փաշայ - 25 յունիս, 1922, Թիֆլիս - Ստեփան Ծաղիկեան:

Բեհանգզին Շաքիր - 17 ապրիլ, 1922, Բեռլին - Արամ Երկանեան/Արշաւիր Շիրակեան:

Ճեմալ Ազմի - 17 ապրիլ, Բեռլին - Արամ Երկանեան/Արշաւիր Շիրակեան:

Ֆաթալի խան Խոյսկի - 19 յունիս, 1920 - Արամ Երկանեան:

Բահրուդ խան Զիւանշիր - 18 յուլիս, 1921, Կոստանդնուպոլիս - Միսակ Թորլաքեան»¹¹:

Թուում է՝ սա պիտի վէպի սկսգրում հնչէր, որպէսզի ընթերցողին տրամադրէր անորոշութեան բացայայտման, որպէսզի դժուար չլինէր հասկանալ քրոնոտոպային

⁹ Նոյն տեղում, էջ 205:

¹⁰ Նոյն տեղում, էջ 224:

¹¹ Նոյն տեղում, էջ 225:

այս միացութիւնը, բայց, ի վերջոյ, հեղինակի համար կարեւոր չէ սա, նա աւելի մեծ գործ ունէր անելու... Իհարկէ, գիտակ ընթերցողին պարզ է՝ ուր է տանում «Նեմեսիս» անուանումը, ինչու են «Փաշայ» թրքանունները կապուում հայկական անունների հետ և յատկապէս ինչու են թուականներից բխող իրադարձութիւնները 1915-ից յետոյ...

Արկածային վէպում արտացոլուող քրոնոտոպ է ոչ միայն ցեղասպանութեան վրէժի հետ կապուած մանրամասների պատումը, այլեւ մինչ այդ՝ ցեղասպանութիւնից յետոյ հերոսների անցած ճանապարհը. «Զիմացաւ, թէ իրենց գիւղից որեւէ մարդ փրկուեց արդեօք: Բացի իր փոքր քրոջից՝ Սաթենիկից, որին տարիներ շարունակ փնտրեց Կրայովայում վաճառական դառնալուց յետոյ, երբ կարող էր վճարել օտար միաբանութիւնների որբանոցներում կատարած որոնումների համար...»¹²: Արկածի կարեւոր յատկանիշները դեռեւս հոմերոսեան «Վէպում»՝ ճանապարհ և որոնում, կապ չունի, թէ ինչ փորձութիւնների միջով է անցել, գտել է, թէ չի գտել, կարեւորը անցել է որոնման ուղին ու հասել սահմանակէտին: Սա էլ է դառնում ինչ-որ չափով յունական վէպի քրոնոտոպային նմուշ, քանի որ սա էլ հայի անհատական ոգիսականն է. սա «Եղեռնական» է...

Յուշը ստիպում է վերապրել նոյնիսկ անյիշելին, անտեսանելին... Վէպի հերոսները միայն տղամարդիկ չեն՝ որպէս պատմագրութեան շարժիչ խթան, կան կանայք, ի դէմս Մեծ մամի, ովքեր իրենց լինելիութեամբ ապահովում են Ֆոլկլորային վէպի յատկանիշները, այստեղ քրոնոտոպը ձուլում է բանահիւսութեանը, որը նոյնպէս գերիշխող է «Շշուկների մատեան» վէպում: Սկսած սուրճի բաժակ նայելուց, մինչեւ անէծքների ու փորձանքների բացատրութիւնները կրում են բանահիւսական տարրը, որի առկայութեանն իհարկէ նպաստում են նաեւ տղամարդ հերոսները. ահա թէ ուր է հասնում միամիտ սնահաւատութիւնը. «Մեծ հայրս վերցնում էր ջութակն ու նուագում, մինչեւ որ մրուրը շորանար գաւաթներում՝ զանազան ծուռումուռ արահետներ գծելով: Մեծ մայրս սուրճի գաւաթով չէր գուշակում, որովհետեւ մեծ հայրս ասում էր՝ ինչ որ գրուած է, անպայման կը կատարուի: Իսկ փորձանքներն աշխարհին տրուած են, ինչպէս խոտը կամ անձրեւը»¹³: Կամ՝ «... «Մեր գորգերը, ասում էր ինձ/մեծ հայրը՝ Ա. Ա./ Աստուածաշունչին պէս են... Հոս Աստուծոյ աչքն է: ...«Եւ սա հրեշտակ մըն է», գուշակում էի ես, իսկ Կարապետ մեծ հայրս հաստատում էր. «Հրեշտակ չէ: Ծեր է, պէտք է հրեշտակապետ մը ըլլայ: Կարելի է Ռաֆայէլը, ան ամենէն ծերն է»¹⁴: Աստուածավախ քրիստոնեայի սնահաւատ պատումը, որ կարող ենք համարել ֆոլկլորային վէպին յատուկ տարածա-ժամանակային քրոնոտոպի տարր, շարունակում է նոյնիսկ վաւերագրութեանը զուգահեռ: Հերոսը պատմում է 1964 թուականի դէպքերի մասին՝ աւելացնելով. «Անցեալ ամառ, երբ ջրերը յորդացան, մարդիկ ասացին, որ Տէր Աստուած ուզեցել է լուանալ այն արիւնը, որ քարերի միջեւ շորացած մնացել էր յիսուն տարի առաջ, դարձեալ արիւնով է փափկում ու միայն յետոյ է ջրով մաքրում»¹⁵: Եւ այս ֆանտաստիկ պատկերով հերոսն արդարացնում է իր հարազատների մահը: Նա անգամ պատրաստ է ինքը զոհ գնալ, միայն թե «...մի ժամանակ բուժուէնք...»¹⁶:

Վէպի ընթացքում հեղինակը պատմում է նաեւ գաղթի ամենածանր շրջանի, ցեղասպանութեան ամենասարսափելի պատկերների մասին, որոնք լրացնում են տարածութեան քրոնոտոպը՝ իհարկէ յատուկելով նաեւ ժամանակին՝ իրենց ենթա-

¹² Նոյն տեղում, էջ 21:

¹³ Նոյն տեղում, էջ 17:

¹⁴ Նոյն տեղում:

¹⁵ Նոյն տեղում, էջ 13:

¹⁶ Նոյն տեղում, էջ 250:

դրելի սահմաններում. «...սխալուելը դժուար չէր, որովհետեւ շարասիւններում գտնուողները, նոյնիսկ առաջին շարքերի ամենադիմացկունները, հողմին ընդդիմանալով՝ քայլում էին հայեացքները դէպի ներքեւ գլուխները հազուադէպ բարձրացնելով, բայց ոչ դէպի ճանապարհը, որն անվերջ էին համարում, այլ դէպի երկինք՝ փնտռելով լոյսի մի նշույլ, մի նշան, որ ցոյց տար, թէ ձիւնը դադարում է, կամ պարզապէս մի այլ նշան»¹⁷:

Տարածա-ժամանակային քրոնոտոպի վառ գոյները «Շշուկների մատեան» վէպում ապահովում է յուշը, որն անխուսափ է, իհարկէ, հայից և հայի պատմութիւնից: Հետաքրքիր կերպ է գտնում հեղինակը՝ արտացոլելու յուշ-կարօտը իր վէպում: Վէպն ընթերցողը շնչում ու արտաշնչում է հերոսների կարօտը՝ յուշերի տեսքով, ապրումների ու զգացմունքների տեսքով. «Մանկութեանս միւս ուղեկիցները եղան հոտերը: Բոլոր զգայարաններից յիշողութեամբ ամենածանրաբեռնուածը հոտառութիւնն է: Բաւական է բացել որեւէ դուռ, որտեղից ընտանեկան ինչ-որ հոտ խուժի, և մտաբերում ես այդ զգացման հետ կապուած բոլոր դէպքերը բուրմունքների միջոցով կարելի է նկարագրել մի ամբողջ կեանք: Մանկութիւնս նոյնպէս կարելի է պատմել»¹⁸: Եւ այսպէս, հեղինակը կարողանում է սահուն անցնել մի հոտից միւսը, հոտերի միջոցով տեղափոխուել անցեալից ներկայ, խառնել երեք ժամանակները և սակայն չխառնուել այս ժամանակների մշուշի մէջ: Մանկութեան համն ու հոտը շարունակում են ներազդող լինել հեղինակի, ինչպէս նաեւ հերոսների կեանքում. առաջինը բոլորիս համար քաջ ծանօթ հացի հոտն է, խմորի հոտը, հացի ու փախլաւայի համը. սրանցով պայմանաւորում է ժամանակի գերակայութիւնը մարդու կեանքում, հինը մշտական է, անցողիկը նորն է. «Եթէ իմ ամբողջ մանկութիւնը խտացնէի նիւթի որեւէ ձեւի մէջ, պիտի ասէի «խմոր»»¹⁹:

Իրար են յաջորդում «Մրգերի, քունջուպուճախների, սուրճի, գրքի, պահարանների, նաւթալինի, լոռութեան հոտերը». պատահական ու զարմանալի չէ, որ լոռութիւնն էլ այստեղ հոտ ունի և ցաւալին այն է, որ ամենամեծ լոռութիւնն ունի արեան հոտը, որը երբեք չի մոռացուի, սակայն հեղինակը վատատես չէ. «Հոտն ուղեկցում է լոռութեամբ, որն էլ իր հերթին ունի իր հոտերը»²⁰:

Բախտինը վիպական շարքում դասում է նաեւ արկածա-հեքիաթային վէպը, որի տարրերը գրեթէ չեն տարբերւում արկածային վէպից: Վարուժան Ոսկանեանի այս ինքնակենսագրական վէպում արկածային տարրերն ու բանահիւսականը յաճախ են միաձուլւում: Հերոսները հաւատում են նախապաշարմունքներին, որոնք կրել են իրենց նախապապերը, ապրում են դրանով և դրանով են ստեղծում իրենց կեանքի հեքիաթը: Այս հեքիաթային, անհաւատալի նախապաշարմունքներն ու անհուն հաւատը պայմանաւորում են միայն ու միայն քրիստոնէութեամբ. «Ծառերը խաչին նշանը կը կրեն հոն, ուր ճիւղերը կը խաչաձեւուին: Թռչունները, երբ իրենց թեւերը կը փռեն ու կը թռին, խաչին ձեւը երկինքին վրայ կ'ընեն: Բոլոր եղածներէն, միայն մարդը այս նշանը չունի իր մարմինին վրայ: Անոր համար է, որ մեր Աստուած Յիսուս Քրիստոսը խաչուեցաւ»²¹:

Հերոսների կեանքի նկարագրութիւնը ոչ թէ ժամանակի, այլ տարածութեան քրոնոտոպով է պայմանաւորուած: Բախտինը գրում է. «Տարածութեան քրոնոտոպի այս կոնկրետութիւնը, որոշակիութիւնն է հէնց թոյլ տալիս կեանքի ուղին լայնօրէն

¹⁷ Նոյն տեղում, էջ 316:

¹⁸ Նոյն տեղում, էջ 11:

¹⁹ Նոյն տեղում:

²⁰ Նոյն տեղում, էջ 12:

²¹ Նոյն տեղում, էջ 62:

ընդլայնելու համար»²²։ Բախտինը, պաշտպանելով այս թէզը, շարունակում է գուգահեռել նաեւ որոշ վիճալարոյց կարծիք, թէ գլխաւոր հերոսն ամէն դէպքում կողքից է միջամտում իր կեանքի ուղուն, այսինքն թէ. «...կեանքի ուղուց դուրս է մնում գլխաւոր հերոսը, նա միայն հետեւում է ուղուն, ինքը երբեմն հագնում է այդ ուղին անցնողի դիմակը, բայց իրապէս նա կապ չունի ուղու հետ և ոչինչ չի որոշում ուղուց պայմանաւորուած...»²³։

Վարուժան Ոսկանեանը հմուտ է նաեւ իտէալի որոնումների ասպարէզում, նա գիտի՝ ով պիտի լինի իր իտէալը և ով կարող է ստեղծել իտէալական վէպին մօտեցող կենսագրութիւնը։ Իտէալներն այստեղ նախահայրերն են՝ զոհուած են, թէ ոչ, պայքարել, վրէժ են լուծել, թէ մտածել են իրենց ապրուստը մի կերպ վաստակելու մասին, միեւնոյն է, իտէալ են։ Իտէալ է նոյնիսկ Միսաք Թորլաքեանը, որը թէպէտ. «...հմայքից զուրկ մարդ էր, կարճահասակ ու պնդակազմ, սեւ աչքունքով ու նոյնպիսի մազերով, դրան աւելացրած՝ նաեւ գանգուր, ինչը որ չէր նպաստում նրա կեռ դէմքի բացուելուն...»²⁴։ Սակայն այս ամենով հանդերձ նա «Հաւատարիմ մնաց աւելի շատ իր երազանքներին, քան ողջախոհութեան վիճակին»²⁵։ Սա է հեղինակի համար ամէնից կարեւոր՝ իր իտէալների որոնման ճանապարհին։

Վէպում գրողը չի զլանում ամէն մանրամասնութիւն նկարագրելուց, որպէսզի իր ընթերցողի աչքին էլ պատկերուեն նոյնքան կատարեալ հերոսներ, որքան իր աչքին ու իր յուշերում են եղել։ Եւ ստացում է անգամ էպիզոդիկ որեւէ կերպարի՝ ինչ-որ հօրեղբօր, ինչ-որ հարեւանի կամ նոյնիսկ մեծ հօր կորած քոյր Սաթենիկին, դարձնել կատարեալ ու հաւասարապէս հերոսացնել։ Իտէալ որոնող ու գտնող, հերոսական վէպի տարրերը նոյնպէս ստացուած արտացոլել է հեղինակը։ Իսկ որ իւրաքանչիւր տղամարդ ասպետ է, ասպետօրէն վեհ, քաջազն, սա միանշանակ է։ Միայն «Նեմեսիսի» մասին մերկացնող յուշագրութիւնը արդէն իսկ ասպետագրութիւն է։ Իրականութիւնից հեռու է վրէժխնդրութեան այսքան ուժգին զգացողութիւնն ու այսպէս տաքարին լուծումը, բայց իրական է ու ասպետական, այսինքն՝ հային յատուկ։ Հակադրութիւնը նոյնպէս կայ՝ ՓԱՇԱՅ և ՀԱՅ, նոյնն է՝ ԵՐԿՐԻ ԳԱՂՋ ԶԱՀԻԺ և ԵՐԿՐԻՔ։ Այս հակադրութեան շնորհիւ է գուցէ, որ ստացուած է ասպետական վէպի որոշակի գուներանգը «Շշուկների մատեանում»։

Գուցէ ինքնակենսագրական վէպի ժանրային առանձնայատկութիւն են ժամանակի անընդհատ վայրիվերումները, սակայն երբեմն դրանք կարող են ընթերցողին խանգարել՝ ճիշդ ընկալել դէպքերն ու դէմքերին։ Հեղինակը ինքն էլ կարծես հասկանում է սա. «Իսկ մի քանի տող աւելի ներքեւ Կարապետ մեծ հայրս մանուկ պիտի լինի։ Այսպէս, գրքի էջերը գրելուն զուգընթաց, դրանք թերթատում են իսկ ես մեծանում եմ, պապերս երիտասարդանում են, ես պիտի ծերանամ ու օրօրեմ նրանց, միասին պիտի ծնունք ու մահանանք»²⁶։

²² Бахтин М., “Вопросы литературы и эстетики”, Москва, 1975, стр. 271.

²³ Նոյն տեղում

²⁴ Ոսկանեան Վ., Շշուկների մատեան, Երեւան, 2012, էջ 210:

²⁵ Նոյն տեղում:

²⁶ Ոսկանեան Վ., Շշուկների մատեան, Երեւան, 2012, էջ 210:

Ա. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՈՍԿԱՆԵԱՆԻ «ՇՇՈՒԿՆԵՐԻ ՄԱՏԵԱՆ» ՎԷՊԸ ԲԱՆՏԻՆԵԱՆ ՔՐՈՆՈՏՈՊԻ ՀԱՅԵԱՑՔՈՎ

Ամփոփում

Այսպէս՝ որպէս ամփոփում՝ Վարուժան Ոսկանեանի «Շուկների Մատեանում» կարող ենք գտնել քրոնոտոպային ցանկացած երեւոյթ՝ վիպական տարբեր ժանրերում, սա նաեւ յուշի ճկունութեան արդիւնք է, քանի որ ժամանակային տարածութիւնը չափազանց մեծ է՝ շուրջ երկու դար: Երկու հարիւր տարում փոխւում են ոչ միայն սերունդները, ճանապարհներն ու տարածքները, այլեւ մտածելակերպը, ապրելաոճն ու գոյները: Նոյնն է մնում միայն... արիւնը: Չնայած յուշագրութեանը, չնայած նրան, որ հեղինակը ամբողջ վէպը պատմում է ականատեսի աչքով և առաջին դէմքով, միեւնոյն է, չի խառնւում վէպին՝ որպէս գործող անձ: Եւ իրօք, հեղինակը ամբողջ պատումը ներկայացնում է խիստ օբյեկտիւ, այսինքն՝ օտարի աչքով. հէնց այս է գլխաւոր պատճառը, որ «Շուկների մատեանը» կարող ենք համարել ցեղասպանութեան բովոյժ անցած ժողովրդի պատմական, փաստական յուշագրութիւն, որը անօրինակ է իր բնոյթի մէջ: Վարուժան Ոսկանեանի պատումը ստացուած և մնայուն է բոլոր առումներով:

A. AREVSHATYAN

VARUZHAN VOSKANYAN'S "BOOK OF WHISPERS" POEM

FROM THE CHRONOTYPICAL POINT OF VIEW

Summary

Thus, in Varuzhan Voskanyan's "Book of Whispers" we can find any chronotypical phenomenon in different genres which is also the result of the humble flexibility, because the time space is too big - for about two centuries. In two hundred years not only generations, roads and territories change, but also way of thinking, lifestyle and colours. Only blood remains the same. Despite the memoir, despite the fact that the author tells the entire novel in the eye of the witness and his first face, he does not interfere with the novel as an acting person. And really the author presents the whole episode strictly objective that is in the stranger's eye. This is the main reason why we can consider the "Book of Whispers" a historical factual memorandum of a nation suffered from genocide and which is unmatched in its nature. The episode of Varuzhan Voskanyan is permanent in all respects.